Հայ-Ռուսական համալսարանում գործող
ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի
իրավագիտության 063 մասնագիտական խորհրդին
(հասցե՝ 0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի փող. 123)

Կ Ա Ր Ծ Ի Ք

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ,
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ,
ՊՐՈՖԵՍՈՐ ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

Ռաֆիկ Խանդանյանի՝ «Դատական վերահսկողությունը նորմատիվ բնույթի իրավական ակտերի նկատմամբ (տեսապատմական վերլուծություն)» վերտառությամբ՝ ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Թեմայի ընտրությունը թելադրված է նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ դատական վերահսկողության տեսական-իրավական նշանակություն ունեցող հարցադրումների համակողմանի հետազոտման ու գիտականորեն հիմնավորված լուծումներ առաջադրելու անհրաժեշտությամբ: Ընդ որում, իրավական ներկայիս կարգավորումների համատեքստում և իրավական համակարգի համընդհանուր արդիականացման պայմաններում հիշյալ հարցադրումներն ունեն արդիական նշանակություն:

Հեղինակին հաջողվել է հավուր պատշաճի հիմնավորել թեմայի ընտրությունը, անդրադառնալով դրան առնչվող հիմնահարցերի ինչպես գիտագործնական ու արժեբանական նշանակությանը, այնպես էլ հետազոտության վիճակին: Մասնավորապես, ինչպես իրավացիորեն նկատել է հեղինակը. «դատական վերահսկողության օբյեկտների հստակեցման նպատակով անհրաժեշտ է մշակել ընդհանուր տեսական հատկանիշներ, որոնց հիման վրա հնարավոր կլինի հստակեցնել նորմատիվ բնույթի ակտերի և անհատական ակտերի տարբերակումը, ինչպես նաև նորմատիվ բնույթի լոկալ (ներքին) իրավական ակտերի նույնականացման չափանիշները:» (էջ 13):

Միաժամանակ, հեղինակի կողմից կարևորվում է առանցքային նշանակություն ունեցող այն մոտեցումը, որ «պետական և ոչ պետական մարմինների լոկալ (ներքին) իրավական ակտերի նկատմամբ ուղղակի դատական վերահսկողության օրենսդրական ճանաչման հայեցակարգային մոտեցումը պահանջում է ՀՀ վարչական դատավարության

օրենսգրքում և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում սահմանել լոկալ իրավական ակտերն ուղղակի կարգով դատարանում վիճարկելու և դրանք անվավեր ճանաչելու մասին նորմեր:» (էջ 13):

Հեղինակը գիտական բարեխղճությամբ ու անհրաժեշտ հետազոտական խորությամբ բացահայտել է նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ դատական վերահսկողության օրենսդրական կարգավորման, ինչպես նաև այդ ակտերի ստուգման իրավաչափության չափանիշները, վեր հանել տեսական ու պրակտիկ առանձնահատկությունները և դրանց հիման վրա հիմնավորվել են այդ կարգավորման գործառույթների և սկզբունքների կիրառական ու գործառնական նշանակությունը:

Միաժամանակ, հեղինակի դատողությունները համոզիչ են հատկապես այն առումով, որ նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ դատական վերահսկողության համակարգում «վերահսկողության օբյեկտ», «վերահսկողության առարկա», «արդարադատություն» և այլ եզրույթների վերաբերյալ իրականում առկա է շփոթ՝ կապված այդ հասկացությունների բովանդակային ու գործառութային նշանակության և դրանց բնութագրիչների ձևախեղման միտումների հետ:

Միանգամայն անհրաժեշտ է նաև կարևորել հեղինակի այն մոտեցումները, ըստ որի՝ ներքին բնույթի նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ դատական ուղիղ վերահսկողության բացակայությունը, այդ ոլորտի առանձին եզրույթների բովանդակային սահմանների ձևախեղումները նոր իրողության խնդիրների համատեքստում պահանջում են համակարգված լուծումներ դրանց գործառութային դերակատարության անհրաժեշտության ու արժեբանական նշանակության վերաբերյալ տեսական և միասնական մոտեցումների ձևավորման առումով:

Այս առումով խրախուսելի է հեղինակի կողմից նման աշխատանք ներկայացնելը, որի հիմքում առաջադրված են հետազոտական կարևոր նշանակություն ունեցող խնդիրներ՝ կապված նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության արդի վիճակի ու հիմնահարցերի հետազոտումը:

Ընդհանուր առմամբ հեղինակն ուսումնասիրել է համարժեք մասնագիտական գրականություն և վերլուծել թեմային առնչվող գիտագործնական նյութեր: Հեղինակը դրսևորել է թեմային առնչվող տեսական աղբյուրների համարժեք իրազեկվածություն, ինչպես նաև դրանցից օգտվելու և պատշաճ վերլուծություններ կատարելու անհրաժեշտ ունակություն:

Ատենախոսության հիմնադրույթները ամբողջությամբ արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված մենագրություններում, ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից սահմանված գիտահետազոտական ամսագրերում տպագրված գիտական հոդվածներում, ինչպես նաև սեղմագրում:

Ատենախոսության կառուցվածքը հնարավորություն է տվել ընտրված հարցադրումների առնչությամբ նյութի շարադրանքը դարձնել առավել տրամաբանական ու ամբողջական, իսկ առանձին հիմնահարցերի համակողմանի ուսումնասիրությունը նպաստել է մասնավոր ու կոնկրետ խնդիրների ամբողջական հետազոտությանը:

Ատենախոսությունը, որոշ բացառություններով հանդերձ, շարադրված է հստակ ու միաժամանակ պատշաճ գիտական լեզվառճով:

Աշխատանքը զերծ չէ նաև որոշ թերություններից, որոնց առնչությամբ անհրաժեշտ է ներկայացնել ընդհանուր և համակարգային բնույթի որոշակի նկատառումներ:

Ընդհանուր բնույթի նկատառումների շրջանակում անհրաժեշտ է նշել, որ հեղինակի կողմից ատենախոսության գիտական նորույթի կառուցվածքում պաշտպանության ներկայացվող առանձին դրույթների շարադրանքը գրեթե ամբողջությամբ նույնական են ատենախոսության եզրահանգումների հետ: Թերևս, դա, ենթադրում եմ, պայմանավորած է հեղինակի գիտական ինքնատիպ ոճով: Այսպես, եթե աշխատանքի եզրահանգումը ներկայացվում է կատարված հետազոտության արդյունքների շարադրմամբ, ապա պաշտպանության ներկայացված դրույթը պետք է պայմանավորված լինի արդեն իսկ այդ արդյունքների ու գիտականության տարր բովանդակող հիմնական դրույթների ձևակերպմամբ:

Բացի այդ, ընդհանուր բնույթի նկատառումների շրջանակում կարծում եմ, անընդունելի է օգտագործված գրանության ցանկի կառուցվածքում նորմատիվ իրավական և դատական ակտերը ներկայացնել ցանկի վերջում, միաժամանակ, խրախուսելի չէ, երբ դասագրքերը կազմել են նույն ցանկի բաղկացուցիչ մաս:

Միաժամանակ, ատենախոսության վերաբերյալ առկա են որոշակի նկատառումներ, որոնք բանավեճային նշանակություն ունեն և մասնակիորեն կրում են համակարգային բնույթ: Այսպես.

1) Գրախոսվող աշխատանքի շրջանակում ատենախոսության 1-ին գլխի (էջ 27-65) և պաշտպանության ներկայացված 4-րդ կետի դրույթի (էջ 21) կապակցությամբ հեղինակը տարանջատելով դատական վերահսկողության օբյեկտն ու առարկան, միաժամանակ, ներկայացրել է դատական վերահսկողության օբյեկտի և առարկայի սահմանումը:

Արդարացի է այն դատողությունը, որ դատական վերահսկողության օբյեկտների հայեցակարգային ըմբռնման խնդիրները բավարար զարգացում չեն ստացել ինչպես իրավական դոկտրինում, այնպես էլ իրավական պրակտիկայում: Անշուշտ, այս տարրն ավանդաբար կարգավորվել և լուսաբանվել է դատավարական այս կամ այլ ճյուղի կիրառման համատեքստում կամ արդարադատության գործառույթների իրացման ոլորտում.

Ներկայացված դրույթի տրամաբանությունից բխում է, որ դատական վերահսկողության օբյեկտ են կազմում միայն այն ակտերը, որոնց իրավաչափությունը ստուգվում է դատարանների կողմից:

Կարծում եմ, դատական վերահսկողության օբյեկտի բնութագրման համատեքստում հետազոտության առարկա պետք է դիտարկվեին նաև առավելապես այն չափանիշների համալիրը, որոնցով կանխորոշվում են դատական վերահսկողության օբյեկտի սահմանման շրջանակները:

Բացի այն չափանիշներից, որոնց առկայությամբ ստուգվում է իրավական ակտերի իրավաչափությունը (անձի իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը անմիջականորեն կամ անուղղակի սահմանափակող ակտեր, հանրային իշխանության մարմինների լիազորությունների իրականացման հետևանքով կամ նրա օրինական շահերի իրացմանն համար խոչընդոտներ կամ արգելքներ սահմանող ակտեր և այլն), կարծում եմ, դատական վերահսկողության օբյեկտ անհրաժեշտ է դիտարկել նաև այն իրավահարաբերության առարկան, որի մասնակիցն օժտված է հանրային իրավական սուբյեկտությամբ, կամ այն իրավաբանական փաստերը, որոնց առնչությամբ ծագում են

այսպես կոչված պայմանական վիճելի հարաբերություններ, որոնք օրենքի ուժով նախաձեռնվում են դատական վերահսկողության սուբյեկտի կողմից և այլն:

Ինչ վերաբերում է հեղինակի այն մոտեցման հետ, որ դատական վերահսկողության առարկան նորմատիվ բնույթի իրավական ակտերի իրավաչափությունն է՝ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերին համապատասխանության տեսանկյունից, կարծում եմ ներկայացվածի կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ վերահսկողության կոնկրետ տեսակով պայմանավորված դատական վերահսկողության առարկան կազմող տարրերի՝ իրավական ակտի բովանդակության, ընդունման կարգի ու պայմանների համատեքստում, կարևոր նշանակություն ունեն հանրային իրավական այնպիսի հատկանիշներով օժտված բնութագրիչներ, ինչպիսին են՝ սահմանադրականությունը, օրինականությունը, ինչպես նաև՝ այդ ակտերի ընդունման հիմնավորվածությունը և նպատակահարմարությունը: Ասվածի համատեքստում, կարծում եմ, դատական վերահսկողության առարկա անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն նորմատիվ բնույթի իրավական ակտերի իրավաչափությունը՝ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերին համապատասխանության տեսանկյունից, այլև՝ այդ ակտերի ընդունման հիմնավորվածությունը և նպատակահարմարությունը:

Այստեղից, հեղինակի կողմից որոշակի հստակեցման կամ պարզաբանման անհրաժեշտություն կա:

2) Աշխատանքի 4.4-րդ ենթագլխի (էջ 273-284) և պաշտպանության ներկայացված 5-րդ կետի դրույթի (էջ 21) շրջանակում հեղինակի կողմից կատարված վերլուծությունների արդյունքում հիմնավորվել է այն դիրքորոշումը, ըստ որի՝ ՀՀ իրավական համակարգում պետք է էքսպլիցիտ ճանաչել պետական և ոչ պետական մարմինների ընդունած նորմատիվ բնույթի ներքին (լոկալ) իրավական ակտերի նկատմամբ ուղղակի դատական վերահսկողության ինստիտուտը, որի պարագայում գործնական կարևոր նշանակություն ձեռք կբերի լոկալ իրավական ակտերում ամրագրված կանոնների և կորպորատիվ նորմերի սահմանազատումը, ինչպես հարցերը:

Հիշյալի կապակցությամբ անհրաժեշտ համաձայնվել հեղինակի այն պնդման հետ, որ դատական ուղղակի վերահսկության օբյեկտ անհրաժեշտ է նաև դիտարկել ներքին (լոկալ) իրավական ակտերը: Սակայն, այդպիսի ճանաչումը, կարծում եմ, նպատակաուղղված է ոչ այնքան անհատական ու նորմատիվ իրավական ակտերից ներքին (լոկալ) իրավական ակտերի տարանջատմանը, որքան մարդու և քաղաքացու դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացմանը: Այս առումով, կարծում եմ հեղինակի կողմից պաշտպանության ներկայացվող դրույթն լրացուցիչ հիմնավորման ու պարզաբանման կարիք ունի:

3) Աշխատանքի 1.4.1-րդ ենթագլխի (էջ 58-66) և պաշտպանության ներկայացված գիտական նորույթի (կետ 8, էջ 22) շրջանակում հեղինակը՝ իրավական պրակտիկայում առկա հիմնախնդիրների համակարգային վերլուծության շրջանակում հիմնավորել է այն դիրքորոշումը, ըստ որի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածի կարգավորումների շրջանակում՝ կիրառելով «ուսումնասիրությունների զանգվածայնության» մեթոդը (տաքսացիա): Հիշյալ մեթոդով պայմանավորված՝ հեղինակը առաջարկում է դատական վերահսկողության օբյեկտ դիտարկել հանրային իշխանության մարմինների ընդունած իրավական ակտերը, այն դեպքում, երբ գործող կարգավորումների համաձայն՝ վարչական դատարանում (բացի Սահմանադրությունից) բողոքարկվում են միայն՝

Հանրապետության Նախագահի, կառավարության, վարչապետի նորմատիվ իրավական ակտերի, գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև համայնքի ավագանու ու համայնքի ղեկավարի նորմատիվ իրավական ակտերը:

Հարկ է նկատել, որ «հանրային իշխանության մարմինների իրավական ակտեր» բառակապակցությունը՝ ինչպես բովանդակային իմաստով, այնպես էլ Սահմանադրության նորմերով կիրառվող հասկացությունների կիրառական ու միաժամանակ գործառնական նշանակության տեսանկյունից, ամբողջությամբ տարբերվում է հեղինակի առաջարկության հիմքում դրված նույն բառակապակցության տրամաբանությունից: Անշուշտ, հեղինակի կողմից բերված հիմնավորումը, ըստ որի՝ *«(...) ՀՀ վարչական դատարանի դատավորների մոտ գերակայում է այլ՝ ՀՀ վարչ. դատ. օր-ի 191-րդ հոդվածի տառացի մեկնաբանությունը, որի համաձայն՝ ՀՀ վարչական դատավարության կարգով կարող են վիճարկվել բացառապես ՀՀ վարչ. դատ. օր-ի 191-րդ հոդվածում թվարկված նորմատիվ իրավական ակտերը»* (էջ 66), կարծում եմ, կիրառական նշանակություն ունի, իսկ՝ որպես պաշտպանության ներկայացված դրույթ, հեղինակի կողմից ենթակա է լրացուցիչ հստակեցման այն հիմնավորմամբ պայմանավորված, որ հանրային իշխանության մարմինների իրավական ակտերի մասշտաբայնությունը և դրանց առանձին տեսակների՝ բացառապես սահմանադրական դատական վերահսկողության օբյեկտ դիտարկվելը ինքնին վկայում է այն, որ նույն մարմինների ոչ բոլոր ակտերը կարող են բողոքարկվել վարչական դատանում:

4) Ատենախոսությունում պաշտպանության ներկայացված որոշ հիմնադրույթների շարադրանքները, որոնք պայմանավորված են օրենսդրական կարգավորումներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև դատական վերահսկողության օբյեկտների դասակարգման կապակցությամբ, հնարավորություն չեն տվել լիարժեք բացահայտել պաշտպանության ներկայացված գիտական նորույթի էությունն ու գիտականությունը: Այստեղ, խոսք կարող է լինել աշխատանքի 4.4.2 և 4.4.3 ենթագլուխների (էջ 216-221, էջ 2010-2015) պաշտպանության 6 և 7-րդ կետերով ներկայացված դիրքորոշումների մասին (էջ 21):

Ամփոփելով ատենախոսության վերաբերյալ արված նկատառումները, անհրաժեշտ է նկատել, որ դրանք առնչվում են հիմնականում գիտական բանավեճի շրջանակներին կամ ունեն խմբագրական թերություններն ընդգծելու բնույթ և չեն նսեմացնում հետազոտության գիտագործնական արժեքը:

Հեղինակին, ընդհանուր առմամբ, հաջողվել է զերծ մնալ խրթին ու բազմաբովանդակ մտքերից ու արտահայտություններից և ցուցաբերել ինքնատիպություն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» 20025 թվականի սեպտեմբերի 11-ի ՀՕ-285-Ն օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումների համաձայն՝ «(...) դոկտորանտ ձևակերպված անձանց համար գիտական աստիճանի շնորհման գործընթացը շարունակվում է կարգավորվել «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» 2000 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-119 օրենքի 16-րդ հոդվածի դրույթների հիման վրա ընդունված իրավական ակտերով (...)», ուստի՝ ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ռաֆիկ Խանդանյանի՝ «Դատական վերահսկողությունը նորմատիվ բնույթի իրավական ակտերի նկատմամբ (տեսապատմական վերլուծություն)» թեմայով դոկտորական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ

հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 8-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.01 «Պետության և իրավունքի տեսություն ու պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանին:

Հայաստանում Եվրոպական համալսարանի
Իրավագիտության ամբիոնի պրոֆեսոր, Ի.Գ.Դ., Պրոֆ.

Ա.Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

21 հոկտեմբերի 2025 թ.

Պրոֆեսոր Աշոտ Խաչատրյանի ստորագրությունը
հաստատում եմ

Հայաստանում Եվրոպական համալսարանի
Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի պետ

Տաթևիկ Մարության

21.10.2025 թ.